30 JUL 2010

Ա-91

Ռ. ԱՐՄԵՆՅԱՆ

ԽՈՇՈՐ ՑԵՂՋՅՈՒՐԱՎՈՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԺԱՆՏԱԽՏԸ

ԵՐԵՎԱՆ
1925

619.2
Ա-91

«ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ»-Ի ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՄԲ

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. Ս. Շագուցց — *Մեր անելիքները* . . . . . 20 կ.
2. Հ. Փիրումյան յեվ Ա. Մելիքոնյան. — *Ինչու՞ ձեռնտու յե գործարանում յուղ և պանիր պատրաստելը* . . . . . 3 »
3. Հ. Փիրումյան. — *Խոտաբույսերը և նրանց մշակության յեղանակները* . . . . . 10 »
4. Խ. Ավդալբեգյան. — *Հ. Ս. Խ. Հ. Հողային Որենսգիրքը, բացատրական հարց ու պատասխաններով, մասն առաջին, աշխատավորական հողագործություն* . . . . . 40 »
5. Պ. Հեքիմյան. — *Թթենու մշակությունը* . . . . . 10 »
6. Պ. Հեքիմյան. — *Շերամի վորդը, նրա կերակրելն ու խնամքը* 10 »
7. Կ. Մելիք-Շահնազարյան. — *Ծխախոտի մշակությունը* . . . 20 »
8. Ս. Քրիգոլին. — *Տասը պատգամ անասնապահին* . . . . . 20 »
9. Խ. Ցերիցյան. — *Անհատական, թե՞ կոոպ. կաթնատնտեսություն* 10 »
10. Հ. Հարությունյան. — *Բատրակ, կնքիր պայմանագիր (չափածո)* 5 »
11. Մ. Թումանյան. *Շարքացանի և նրա նշանակությունը* 15 »
12. Խս. Տեր-Ներսիսյան. — *Ինչպես պետք է մշակել խաղողի այգիները (28 նկարով)* . . . . . 35 »
13. «Ցերեսներս գեպի գյուղ». — Անդրկովկասյան Ցերկրային Կոմիտեյի բանաձևը գյուղացիական հարցի մասին ընկ. Ս. Շագուցցի նախաբանով . . . . . 15 »
14. Հայաստանի Կոմունիստական Կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի յորոդ պլենումի բանաձևերը . . . . . 15 »
15. Ռ. Արմենյան. — *Խոշոր յեղջյուրավոր անասունների ժանտախտը* . . . . . 15 »

ՏՊԱԳՐՎՈՒՄ ԵՆ ՅԵՎ ՇՈՒՏՈՎ ԼՈՒՅՍ ԿՏԵՍՆԵՆ

1. Հ. Ավետյան. — *Գյուղատնտեսական բանվորությունը և մի-ջազգային կոմունիստական շարժումը։*
2. Խ. Ցերիցյան. — *Կաթնատնտեսության գործնական ձեռնարկ, մասն առաջին, (64 նկարով)։*
3. Հ. Փիրումյան. — *Դեմի հողերի մշակությունը։*

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
№ 16 (19) «ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ»-Ի № 16 (19)

619.2
Ա-91

Ռ. ԱՐՄԵՆՅԱՆ

ԽՈՇՈՐ ՅԵՂՋՅՈՒՐԱՎՈՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԺԱՆՏԱԽՏԸ

ՅԵՐԵՎԱՆ
1925

8977

26 FEB 2013

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ ԽՄԲ. ԿԱԼԼԵԳԻԱՅԻ

ՏՐԵՍՏԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Գրատ. 151բ. Պատ. 4916 Տիրաժ 2500

328874

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

1. Ցերկու խոսք մեր ընթերցողներին 5
2. Ինչ է խոշոր յեղջյուրավոր անասունների ժանտախտը . . 7
3. Ժանտախտի պատմությունը 7
4. Ժանտախտի պատճառած վնասները 8
5. Ժանտախտի տարածման պատճառները 9
6. Ժանտախտի պատճառը 10
7. Ժանտախտի վիրուսի գտնված տեղը յեվ անասունների վարակումը 10
8. Վարակվող անասունները 12
9. Կորուստի չափը 13
10. Հիվանդության նշանները 13
11. Բժշկություն 17
12. Հակաժանտախտային շիճուկը 18
13. Հակաժանտախտային շիճուկի ազդեցությունը 18
14. Պատվաստում 18
15. Կարանտինային հսկողությունը 20
16. Ինչ պետք է անել մինչեվ անասնաբույժի գալը 21
17. Վարակված գոմերի յեվ այլ վայրերի ախտահանումը . . 22

ՑԵՐԿՈՒ ԽՈՍՔ ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

Սովետական Հայաստանի Հողագործության ժողովրդական Կոմիսարիատը «Գյուղացու Գրադարան» ընդհանուր վերնագրի տակ ձեռնարկել է գյուղատնտեսության զանազան ճյուղերին նվիրած մի շարք գրքույկների հրատարակության։ Նա նպատակ ունի այդ գրքույկների միջոցով զարկ տալ գյուղական տնտեսության բարձրացման յեվ նպատակահարմար ձեվով տնտեսությունը վարելու գործում պարզ ու ըմբռնելի ցուցմունքներով աջակցել գյուղացուն։ Այս հվմնական նպատակն իրագործելու համար գրքույկների նյութը հարմարեցված է միջին գրագետ գյուղացու պահանջներին։

Լավ գիտակցելով ձեռնարկած գործի լրջությունն ու կարեվորությունը, Հողժողկոմատի Խմբագրական-Հրատարակչական Կոլլեգիան համոզված է, վոր այս գրքույկը, ինչպես յեվ մինչեվ որս իր հրատարակությամբ լույս տեսած մյուս գրքույկները նյութի յեվ լեզվի տեսակետից վորոշ թերություններ կարող են ունենալ։

Թե՛ այս յեվ թե՛ այլ հնարավոր թերությունները վերացնելու, հրատարակության գործը կանոնավորելու յեվ գյուղացու պահանջները բավարարելու համար Հողժողկոմատի Խմբագրական-Հրատարակչական Կոլլեգիան խնդրում է ընթերցողներին յեվ գյուղատնտեսության աշխատավորներին իրենց դիտողություններն ուղարկել Յերեվան, Հողժողկոմատ։

Ամեն մի արժեքավոր դիտողություն կընդունվի մեծ շնորհակալությամբ։

Գրարները կարելի չե ուղարկել առանց նամակագրոշմի։

ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ԽՄԲ.-ՀՐԱՏ. ԿՈԼԼԵԳԻԱ

ԽՈՇՈՐ ՅԵՂՋՅՈՒՐԱՎՈՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԺԱՆՏԱԽՏԸ

1. ԻՆՉ Է ԽՈՇՈՐ ՅԵՂՋՅՈՒՐԱՎՈՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԺԱՆՏԱԽՏԸ

Այս հիվանդությունը խոշոր յեղջյուրավոր անասուններին (տավարին) և գոմեշներին հատուկ խիստ վարակիչ և համաճարակային մի հիվանդություն է։ Յերբ անասնապահական մի շրջանում այդ հիվանդությունը յերևում է, այնտեղ անասունների մեծ մասը կոտորվում է, իսկ այդ հիվանդությունից առողջացած անասուններն այնքան են նիհարում, որ յերկար ժամանակվա համար անպետք են դառնում։

2. ԺԱՆՏԱԽՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Այս հիվանդությունը հայտնի յե հին ժամանակներից։ Այն ժամանակ, յերբ գոյություն չուներ անասնաբուժական գիտությունը և հայտնի չեր վարակիչ համաճարակային հիվանդությունների բնույթն ու տարածման պատճառները, ժանտախտը թե Յեվրոպայում, թե Ասիայում և թե Աֆրիկայում առաջ եր գալիս յերբեմն, մանավանդ պատերազմների ժամանակ, հսկայական քանակներ պատճառելով։

Ժանտախտի ամենամեծ համաճարակը պատահել է 1709—1717 թվականներին։ Այդ թվականներին ժանտախտը սկսվում է Ռուսաստանի սահմաններում, Թուրքեստանում, Դոն և Վոլգա գետերի ուղղությամբ տարածվում է մինչև Մոսկվա, անցնում է Լեհաստան, Հունգարիա, Գերմանիայի արևելյան և հարավային մասերը, Շվեյցարիա,

Իտալիա, Ֆրանսիա, Հոլանդիա և Անգլիա։ Ժանտախտից ազատ են մնում միայն Շվեդիան և Սպանիան շնորհիվ այն հանգամանքի, որ դրսից բոլորովին տավար չեն ստանում։ Միայն Անգլիայում յերեք տարվա ընթացքում (1711—1714 թ. թ.) կոտորվում են մեկ ու կես միլիոն տավար։

Այն ժամանակ այսպիսի հսկայական ծավալումը և պատճառած տոհելի ավերումներն են պատճառ դառնում, որ հեռահեռ լույս են տեսնում այդ հոժարակը նրկարագրող գրքեր և շատանում են անասնաբուժական դպրոցները։

3. ԺԱՆՏԱԽՏԻ ՊԱՏՃԱՌԱԾ ՎՆԱՍՆԵՐԸ

Թե ինչպիսի սոսկալի վնասներ է տալիս ժանտախտը, կարելի յե տեսնել հետևյալ թվերից.

1740—1750 թ. թ. ամբողջ Յեվրոպայում կոտորվել են 3,000,000 տավար

1745—1752 » » միայն Դանիայում կոտորվել են 2.000.000 տավար

1746 թ. Անգլիայում սպանված են*) 80.000 »

19-րդ դարու սկզբներին ամբողջ Յեվրոպայում կոտորվել է յեկող հարյուր միլիոն տավար, որից միայն հարյուր միլիոնը Գերմանիայում.

1841 թ. Յեգիպտոսում կոտորվել են 500.000 տավար

1844—1845 թ. թ. Ռուսաստանում կոտորվել են 1.000.000 »

1865 թ. Անգլիայում կոտորվել են 138.578 »

և հիվանդության պատճառով սպանվել են 100.180 »

1865 թ. Հոլանդիայում կոտորվել են 68.550 »

և սպանվել են 36.485 »

*) Սպանված են ժանտախտի տարածման առաջն առնելու համար։ Ռ. Ա.

1870—1871 թ. թ. Ֆրանսիայում կոտորվել են 100.000 տավար

Յեվրոպական Ռուսաստանում կոտորվել են՝

1885 թ. 350.000 »

1886 թ. » » 268.000 »

1887 թ. » » 76.000 »

1889 թ. » » 37.000 »

1889—1893 թ. թ. » 1 062.032 »

1897—1898 թ. թ. Հարավային Աֆրիկայում կոտորվել են 2.280.000 տավար

1903—1906 թ. թ. Սուրին Յեգիպտոսում կոտորվել են 500 000 տավար

Ներկայումս Յեվրոպայում ժանտախտը շնորհիվ ձեռք առած ամենախիստ և կարուկ միջոցների, բոլորովին արմատախիլ է արված, սա այն Անդրկովկասում, Տաճկաստանում և Ռուսաստանի մի քանի ծայրամասերում նա շարունակում է իր ավերումները։

Հայաստանում միայն վերջին չորս տարիների ընթացքում սատկել է 15.378 գլուխ անասուն։

4. ԺԱՆՏԱԽՏԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Անդրկովկասում ընդհանրապես և Հայաստանում մասնավորապես, ժանտախտի վերացման խանգարող պատճառները բազմազան են։

Ժանտախտի տարածմանը նպաստող պատճառների մեջ ավելի հիմնական նշանակություն ունեն քոչվորների ամառային արոտատեղ բարձրանալը, Հայաստանի և հարևան Տաճկաստանի ու Պարսկաստանի սահմանների վրա անասնաբուժական հսկողության բացակայությունը։ Դրա համար միշտ Հայաստանում ժանտախտը տարածվում է քոչվորական շարժման միջոցին և կամ Տաճկաստանից ու Պարկաստանից բերված անասունների միջոցով։

5. ԺԱՆՏԱԽՏԻ ՊԱՏՃԱՌԸ

Համարյա բոլոր հիվանդություններն առաջ են գալիս անասունի օրգանիզմի մեջ հատուկ մանրեների (միկրոբներ) բազմանալուց։

Մանրե յեն կոչվում (ինչպես իրենց անունն է ցույց տալիս) այն ամենափոքր եյակները, որոնք հասարակ աչքով անտեսանելի յեն և որոնց կարելի յե տեսնել մանրադիտակի ոգնությամբ։ Կան մանրեներ, որոնք անվնաս են և, նույնիսկ, ոգտակար. բայց կան նաև մանրեներ, որոնք մահացու թշնամի յեն մարդկանց և անասունների համար։

Վարակիչ հիվանդությունների մեծ մասի մանրեները գտնված են, բայց կան նաև մի շարք վարակիչ հիվանդություններ, որոնց մանրեները մինչև այժմ չեն գտնված։ Ահա այդ տեսակ վարակիչ հիվանդությունների շարքին է պատկանում յեղջյուրավոր անասունների ժանտախտը։

Չնայած, որ բազմաթիվ գիտական փորձեր են արվել, սակայն մինչև որս հնարավոր չի յեղել գտնել ժանտախտի մանրեն, բայց ի նկատի ունենալով այդ հիվանդության առաջ գալու, զարգանալու և վարակելու պայմաններն ու մի շարք ուիշ տվյալներ, հաստատ կարելի յե ասել, որ ժանտախտն առաջ է գալիս մի առաձին մանրեյից, որը բազմանում է անասունների արյան և աղիքների մեջ. բայց որովհետև այդ մանրեն դեռևս չի գտնված, մենք այստեղ փոխանակ ժանտախտի մանրե ասելու, պիտի գործ ածենք ժանտախտի վիրուս անունը։

6. ԺԱՆՏԱԽՏԻ ՎԻՐՈՒՍԻ ԳՏՆՎԱԾ ՏԵՂԸ ՅԵՎ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԱԿՈՒՄԸ

Ժանտախտի վիրուսը գտնվում է հիվանդ անասունների բերանում, ստամոքսում, աղիքում, արյան, արցունքի, խլնքի, լորձունքի, հեղուկ և պինդ արտաթորության, մսի, ինչպես և կաշվի մեջ։ Մի խոսքով՝ վիրուսը գտնվում է անասունի բոլոր մասերում։ Միևնույն ժամանակ վիրուսը գտնվում է հիվանդի արյան, պինդ և հեղուկ արտաթորության և այլ մասերի հետ շփում ունեցող դարմանի, խոտի, աղբի, ջրի, ոդի մեջ և այլն, ինչպես նաև հիվանդ անասունի գտնված տեղում, պատերի, առաստաղի, հատակի և այնտեղ գտնված բոլոր իրերի վրա։

Հիվանդությունն առողջ անասուններին անցնում է ժանտախտի վիրուսով վարակված վերոհիշյալ իրերի, կերի, ջրի, և այլնի հետ շփվելու միջոցով։ Հիվանդ անասուններին նայողներն իրենց վարակված ձեռքերով, հագուստով և վոտնամաններով հիվանդությունը տալիս են առողջներին։ Հիվանդների համար գործածված չուլերը, պարանները, կապերը ջրելու համար գործածված դույլերը, յեթե առողջ անասունների համար գործածվեն, վարակում են նրանց։ Հավերը, աղավնիները և այլ թռչունները, մանավանդ ագռավները նույնպես պատճառ են լինում հիվանդության տարածման։ Նրանք վարակված աղբի կամ սատկածների լեշերի վրա ման գալուց հետո, ման են գալիս առողջ անասունների խոտի, դարմանի վրա, իրենց վարակված վոտներով վարակում են կերը և պատճառ լինում առողջ անասունների հիվանդանալուն։ Հիվանդ անասունները յեթե ուղարկվեն արածելու, կը վարակեն արոտավայրը, որտեղից էլ կը վարակվեն առողջ անասունները։ Սատկած անասունները յեթե բոլորովին չեն թաղվում, կամ լավ չեն թաղվում, շները նրանց միսը, վոսկորները բերում են արոտավայրերը կամ բակերը, որտեղից և վարակվում են առողջ անասունները։ Սատկած տավարի կաշվից պատրաստում են տրեխ և մոտենալով անասունին, վարակում են նրան։ Յեթե մի քա-

նի գյուղի անասուններ ջուր են խմում միևնույն առվից և յեթե վերեվի գյուղում ժանտախտ կա ու հիվանդները նույն առվից են ջուր խմում, նրանով վարակում են ներքևի գյուղի անասուններին։

Բացի վերոհիշյալ միջոցներից, ժանտախտը կարող է մեծ ծավալ ստանալ նաև ժանտախտով հիվանդ կամ նոր առողջացած անասուններին մի տեղից մյուսը տեղափոխելով, առևտրականների և քոչվորների անասունների անց ու դարձով։ Նրանք հիվանդությունը ցանում են իրենց անցած ճանապարհի վրա։ Վերոհիշյալ տեղեկությունները ցույց են տալիս, թե ինչքան հեշտ է վարակվում առողջ անասունը, այն էլ ամեն մի մի քայլափոխում—արոտավայրում, բակում և ջուր խմելու վայրում. մի խոսքով՝ այն բոլոր տեղերում, վորտեղ յեղել են հիվանդ անասուններ կամ լեշեր ու նրանց մասերը և կամ վորևե ձևով ժանտախտի վիրուսով վարակված նյութերն ու առարկանները շփումն են ունեցել առողջ անասունների հետ։

7. ՎԱՐԱԿՎՈՂ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԸ

Ցեղջյուրավոր անասունների ժանտախտով վարակվում են խոշոր յեղջյուրավոր անասունները (տավարը), գոմեշները և ուղտերը։ Վոչխարներն ու այծերն էլ հիվանդանում են ժանտախտով, բայց մինչև այժմ Հայաստանում չի նկատվել նրանց վարակումը։

Բացի վերոհիշյալ անասունների, մնացած բոլոր անասունները միանգամայն ազատ են յեղջյուրավոր անասունների ժանտախտից։ Ձիերը, ջորիները, խոզերը, շները յերբեք չեն վարակվում այդ հիվանդությամբ։ Մարդիկ նույնպես չեն վարակվում։ Անհրաժեշտ է շեշտել մի հանգամանք, վոր ազնվացեղ (զոտարյուն), խառնուրդ (կիսարյուն) և ազնվացրած տավարը շատ ավելի զգայուն է, ավելի շուտ է հիվանդանում ժանտախտով,

քան տեղական անասունները և ազնվացեղ տավարի մեջ կորուստն ավելի մեծ է լինում։

8. ԿՈՐՍՏԻ ՉԱՓԸ

Կորստի տոկոսը տարբեր է լինում, նայած այն հանգամանքին, թե ժանտախտ գտնված տեղում անասունն ինչ ցեղի յե պատկանում. զտարյուն, կիսարյուն և ազնվացրած անասունների մեջ կորստի տոկոսը լինում է 70—90, իսկ տեղական հասարակ անասունների մեջ՝ 30—60։ Հայաստանում վերջին չորս տարվա ընթացքում կորստի տոկոսը յեղել է 45—72, իսկ միջին տոկոսը՝ 66, այսինքն՝ հիվանդացած 100 գլուխ տավարից սատկել են 66-ը։

Կորստի տոկոսն զգալի չափով պակասում է, յեթե մի վայրում առաջ ժանտախտի հաճախակ է յեղել, յեթե կատարվել են պատվաստումներ բաղադրյալ (կոմբինացիոն) յեղանակով. իսկ յեթե մի վայրում ժանտախտը յերևացել է առաջին անգամ, կորուստը չափազանց մեծ է լինում։ Այս յերևույթը բացատրվում է նրանով, վոր ժանտախտով հիվանդացած և առողջացած տավարը համարյա իր կյանքի ամբողջ տևողության ընթացքում այլևս չի հիվանդանում ժանտախտով, այսինքն ստանում է ախտազերծություն (իմունիտետ)։ Այդ տեսակ անասունների հորթերն ու ձագերն էլ ստանում են վորոշ չափով ախտազերծություն. նրանք կամ բոլորովին չեն հիվանդանում և կամ հիվանդանում են ավելի թեթև կերպով։ Ուրեմն հասկանալի յե, վոր յեթե մի վայրում առաջուց յեղել են հիվանդացածներ ու առողջացածներ, նրանք յերկրորդ անգամ չեն վարակվում ժանտախտով։

9. ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ

Յերբ ժանտախտի վիրուսը մտնում է անասունի մարմնի մեջ, նրան անմիջապես չի հիվանդացնում. անցնում է 3—9, բացառիկ դեպքերում մինչև 19 որ, վորի

ընթացքում վիրուսն ամենայն հավանականությամբ բազմանում է և հետո հիվանդացնում անասունին։ Այդ ժամանակամիջոցը կոչվում է խմորման (ինկուբացիոն) շրջան։ Հասկանալի է ուրեմն, որ շատ անգամ առողջ համարված անասունն իր մեջ ունի հիվանդության վիրուս, այսինքն նա վարակված է և որոշ ժամանակ անցնելուց հետո պետք է հիվանդանա։ Ահա թե ինչու հիվանդություն յեղած վայրից չի կարելի անասուն գնել, նույնիսկ առողջ անասուն, և բերել, խառնել այն վայրի անասունների հետ, որտեղ բոլորովին հիվանդություն չկա։

Առհասարակ մի տնտեսության համար նոր տավար գնելուց հետո չպետք է խառնել տնտեսության հին անասունների հետ, այլ պետք է այդ նոր անասունները 21 որ մի առանձին տեղ պահել և բոլորովին ապահով լինելուց հետո միայն խառնել ուրիշ անասունների հետ։

Ժանտախտով հիվանդացած անասունների առաջին նշանը տաքությունը բարձրանալն է։ Առողջ տավարի տաքությունը 38 – 39,5 աստիճան է (Ցելս), մինչդեռ հիվանդացածների տաքությունը բարձրանում է մինչև 41—42 աստիճան։ Ժանտախտ յեղած վայրում 40 աստիճանից ավելի տաքություն ունեցող անասունները յեթե ժանտախտի ուրիշ նշաններ ցույց չեն տալիս, համարվում են ժանտախտով հիվանդանալու կողմից կասկածելի։

Բացի տաքությունից, հիվանդի ականջները կախ, մազերը ցցված են (փուշ-փուշ յեղած) լինում, ախորժակ չի ունենում, չի վրոճում, ատամները կրճտացնում է, սաստիկ դողում, հեվալով արագ-արագ շունչ է քաշում, թեթև հազում է, քթից թարախի նման խլինք առատ է հոսում, համարյա շարունակ տնքում է, աչքերը նախ կարմրում են, հետո առատ արցունք է հոսում, վորն իր անցած ճանապարհի վրա գտնված մազերը համարյա այրում, նրանց տեղը փոսացնում է (Տես նկ. 1)։

Նկար 1.

Յեթե հիվանդ անասունի բերանը բաց արվի ու քննվի, կը նկատվի, որ ատամների շուրջը կապտել է, շրթունքների ներսի կողմը և լինդերի վրա նախ մի շարք փոքրիկ բշտիկներ (պզուկ) են յերվում. հետո իրենք ծակվում են ու նրանց տեղը փոքր վերքեր են մնում։ Բերանը, ավելի ճիշտ՝ շրթունքների ներսի կողմը թեփով ծածկվածի պես է լինում. բերանից առատ լորձունք է թափվում (Տես նկ. 2)։

Հիվանդության սկզբնական շրջանում անասունների փորը կապ է լինում, իսկ հետո սկսում են լուծել, գարշահոտ, արյունախառն, սևագույն և ջրոտ։

Հիվանդները կարճ ժամանակի ընթացքում նիհարում են, ուժասպառ են լինում, պառկած տեղից չեն կարողանում բարձրանալ և յեթե վոտքի վրա յեն, շարժվելու կարողություն չեն ունենում, աչքերն ընկնում են փոսի մեջ (Տեսնկ. 3)։

Հիվանդ կովերի կաթը հետզհետե պակասում և վերջապես բոլորովին կտրվում է։ Հղի կովերը հորթատում են։ Այս հիվանդությունը միշտ չի լինում այնպես

Նկար 2.

Նկար 3.

Ծանը, ինչպես նկարագրված է։ Այն վայրերում, որտեղ առաջուց ժանտախտը գոյություն է ունեցել, անա-

3 2 9 8 7 6

սունները քիչ թե շատ հիվանդության դիմանում են, դրա համար էլ նրանց հիվանդությունը թեթև է անցնում, բայց տաքություն անպայման լինում է, աչքերից արցունք է հոսում, լուծում են, միևնույն ժամանակ անասունները շարունակում են ուտել։

Ժանտախտը հինգ օրից մինչև 15 օր կարող է տևել. թեթև հիվանդացածների վրա 5-6 օրից հետո լավանալու նշանները յերևում են. սկսում են լավ ախորժակով ուտել, վորոճում են, բայց առհասարակ հիվանդությունը 4 օրից մինչև 7 օր է տևում։ Հիվանդները յերբեմն յերկրորդ կամ յերրորդ օրն են սատկում, սակայն առհասարակ սատկում են 5-6 օրից հետո, յերբ լուծելն արդեն սկսված է լինում։

Հիվանդությունից ազատվող անասունները 3-4 շաբաթ մնում են սատիկ նիհարած, հետո սկսում են տոհմանաբար գիրանալ ու կաղդուրվել։

10 ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

Ժանտախտից ազատվելու համար ամենից առաջ անհրաժեշտ է անմիջապես, առանց մի րոպե ժամանակ կորցնելու, հայտնել անասնաբույժին՝ ուղղակի իրեն և կամ տեղական իշխանության միջոցով, իսկ մինչև անասնաբույժի գալը պետք է ձեռք առնել այն անասնաբուժա-սանիտարական միջոցները, վորոնցով հնարավոր կլինի արգելել և կամ սահմանափակել անասունների վարակման և ժանտախտի ծավալման հնարավորությունները։ Այդ միջոցները, վորոնց մասին կը խոսենք հետո, սրենքով պարտադիր են։ Հիվանդ անասուններին բժշկելու համար արմատական միջոց չկա. իսկ առողջ անասուններին վարակումից և կորստից փրկելու համար կա մի հրաշալի միջոց, դա հակաժանտախտային շիճուկով պատվաստումն է։

[illegible]

11. ՀԱԿԱԺԱՆՏԱԽՏԱՅԻՆ ՇԻՃՈՒԿԸ

Այս շիճուկը պատրաստվում է հակաժանտախտային կայաններում՝ ժանտախտով հիվանդացած և առողջացած անասունների արյունից։ Հակաժանտախտային շիճուկը ներկայումս ստացվում է Ռուսաստանից։ Հայաստանում չորս տարվա ընթացքում (1921-1924 թ. թ.) գործածված է մոտավորապես 12.000 լիտր (750 փութ) շիճուկ, 120.000 ռուբլու արժողությամբ։

12. ՀԱԿԱԺԱՆՏԱԽՏԱՅԻՆ ՇԻՃՈՒԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Հակաժանտախտային շիճուկի մեջ կան այնպիսի նյութեր, որոնք վոչնչացնում են ժանտախտի վիրուսը։ Եթե այդ շիճուկը սրսկվում է առողջ անասնի կաշվի տակ, պատվաստված անասունը վորոշ ժամանակ, այսինքն մինչև այն ժամանակ, երբ շիճուկը պահում է իր ազդեցությունը, ժանտախտին դիմանում է, վոչնչացնելով մարմնի մեջ մտած ժանտախտի վիրուսը. բայց այդ ժամանակամիջոցը 15 որից ավելի չի տևում. բացի դրանից, երբ ժանտախտի վիրուսն անասնի մարմնի մեջ մտնելուց հետո (խժռման շրջանում) շիճուկ է սրսկվում, այդ դեպքում նա քիչ է ոգնում։

13. ՊԱՏՎԱՍՏՈՒՄ

Պատվաստումը կարելի է կատարել երկու եղանակով—պարզ և բաղադրյալ։ Պարզ եղանակով պատվաստում կատարելու համար միայն հակաժանտախտային շիճուկ է սրսկվում. այդ դեպքում անասունը 15 որ ազատվում է հիվանդանալու վտանգից, բայց այդ ժամանակամիջոցն անցնելուց հետո նորից ենթակա է հիվանդանալու վտանգին։ Բաղադրյալ եղանակով պատվաստում կատարելու համար միևնույն ժամանակ սրսկվում է թե հակաժանտախտային շիճուկ և թե ժանտախտով հիվանդ

անասունից վերցրած արյուն. այդ դեպքում պատվաստած անասունները, վորոշ ժամանակ անցնելու հետո, հիվանդանում են ու հետո առողջանում և հետայսուհետև մինչև իրենց կյանքի վերջն ազատվում են ժանտախտով հիվանդանալու վտանգից։

Հայաստանում ընդունված է առհասարակ բաղադրյալ եղանակով պատվաստումը։ Դրա համար անհրաժեշտ է գտնել ժանտախտով հիվանդ մի անասուն, վորն անասնաբույժի կողմից քննվելուց հետո, եթե հարմար է ճանաչվում, գնահատվում է հակաժանտախտային գործադիր հանձնաժողովի միջոցով, անասնաբույժը նրանից արյուն է վերցնում, հետո անասունը մորթվում է և անասնաբույժը քննում է ներքին գործարանները իմանալու, թե բացի ժանտախտից՝ ուրիշ հիվանդություններով ել վարակված չի արդյոք։ Քննությունից հետո, եթե արյունը հարմար է գտնվում, գործածվում է պատվաստումների համար։

Պատվաստման ժամանակ մեծ ուշադրությամբ պետք է հետևել, վոր անասուններին սրսկվի թե շիճուկ և թե արյուն. եթե միայն մեկը սրսկվի, անասունը կարող է հետո սատկել, վորովհետև, եթե միայն շիճուկ է սրսկվում, նրա ազդեցությունը 15 որից հետո անցնում է (ինչպես վերև ասեցինք), և անասունը պատվաստումից 15 որ հետո կրկին կարող է վարակվել ու սատկել, իսկ եթե սրսկվում է միայն արյուն, անասունները շատ ծանր են հիվանդանում և նրա հետևանքով մեծ մասամբ սատկում են։ Բացի դրանից, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել, վոր գյուղի բոլոր անասունները պատվաստվեն, վորովհետև չպատաստված անասունները հետո կվարակվեն ու նրանց մեծ մասը կկոտորվի։

Պատվաստումից 4—10 որ հետո, միջին հաշվով 7 որ հետո, համարյա բոլոր պատվաստված անասունները հիվանդանում են. մի փոքր մասը բոլորովին չի հիվանդա-

նում. մի մասը հիվանդացած լինելու արտաքին նշաններ բոլորովին ցույց չի տալիս, բայց միայն 1—2 օր տաքութիւնը բանձրանում է, վորը հասարյա աննկատելի յե անցնում. անասունների մեծ մասը հիվանդանում է թեթև կերպով, հիվանդության նշանները ցույց է տալիս և 3-4 օր հետո առողջանում, իսկ մի փոքր մասն էլ հիվանդանում է ծանր կերպով. այս վերջինների մեջ պատահում են և մահվողներ. սակայն պատվաստումներից հետո տակածների տոկոսը մեր տեղական անասունների մեջ պատվաստված անասունների ընդհանուր թվի 1—3 տոկոսից (100-ից 1-3-ը) չի անցնում, հաշվելով նաև այն տակածները, վորոնք պատվաստման ժամանակ հիվանդ են լինում։

Պատվաստման հետևանքով առաջացած հիվանդությունը տևում է 7—10 օր։ Այդ ժամանակաշրջանում անհրաժեշտ է խնամքով և զգույշ վարվել անասունների հետ։ Ավելի լավ է մինչև հիվանդության վերացումը լծկանները չաշխատեցնել, իսկ առհասարակ պետք է զգուշանալ, վոր անասունները չմրսեն, և տաք ջուր չըխմեն։

Հիվանդացածներից տակելու կամ առողջանալու վերջին դեպքից հաշված՝ գյուղը մնում է կարանտինային հսկողության տակ 21 օր ևս և այդ հսկողությունը վերացվում է անհրաժեշտ ախտահանումը կատարելուց հետո։

14. ԿԱՐԱՆՏԻՆԱՅԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Ժանտախտի տարածման առաջն առնելունպատակով կատարված հակաժանտախտային պատվաստումները, ժամանակ բաղադրյալ յեղանակով կատարված պատվաստումները, կարող են ժանտախտի տարածման գլխավոր պատճառը դառնալ, յեթե չգործադրվեն կարանտինային միջոցներ։ Ճիշտ է, պատվաստված անասունները կոբրատից ազատվում են, բայց նրանց մեծ մասը (ինչպես

վերև տեսանք) պատվաստման հետևանքով հիվանդանում և դառնում է վտանգավոր հարևան գյուղերի առողջ անասունների համար, նույնպես հիվանդ անասունի հետ շփում ունեցող բոլոր առարկաներն ու տեղերը կրում են ժանտախտի վիրուս և վարակման աղբյուր են առողջ անասունների համար։ Հետևաբար ժանտախտի տարածման առաջն առնելու համար բավական չե անասունները պատվաստել, այլ նաև հարևան գյուղերի անասունների վարակման և հիվանդության տարածման պատճառ չլինելու համար անհրաժեշտ է պահպանել խիստ կարանտինային հսկողություն, համաձայն անասնաբույժի ցուցմունքի և անասնաբուժան կանոնագրքի։

Կարանտինային հսկողության ամենաեական կետն է՝ արգելել յեղջյուրավոր անասունների, մսի, կաթի, կաշվի, յեղջյուրի, սմբակի, քակորի (թրիք), գարմանի և խոտի դուրս տանելը վարակված վայրերից, նույնպես արգելել դրսից վարակված վայրը բերել յեղջյուրավոր անասուններ և գոմեշներ։

15. ԻՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԵԼ ՄԻՆՉԵՎ ԱՆԱՍՆԱԲՈՒՅԺԻ ԳԱԼԸ

Համաձայն անասնաբուժական կանոնագրքի՝ «կենդանիների վրա վարակիչ կամ համաճարակ ախտով հիվանդանալու նշաններ յերևալու, առանց տեսանելի պատճառների հանկարծամահ լինելու կամ միաժամանակ մի քանի միատեսակ հիվանդությունների յերևան գալու դեպքերում կենդանիների տերերը կամ նրանց փոխարինող անձինք պարտավոր են անհապաղ այդ մասին պատշաճ հայտարարություն տալու» (Հոդ. 84)։ Այդ պարտավորությունը տարածվում է նաև այն անձանց վրա, վորոնք իրենց զբաղմունքի հետևանքով շփումն ունեն կենդանիների, նրանց լեշերի, ամամթերքների և այլ հում անասնամթերքի հետ։

Հայտարարություններն ուղարկվում են այդ վայրի

անասնաբուժին կամ անասնաբուժակին ուղղակի և կամ տեղական իշխանության մարմինների միջոցով։

«Վարակիչ լինելու կողմից կասկածելի հիվանդություն յերևալու դեպքում՝ հիվանդ կենդանիների տերերը կամ նրանց փոխարինողները, այլ և հիվանդության մասին ծանուցումն ստացած տեղական իշխանության ներկայացուցիչները մինչև անասնաբույժի կամ բուժակի գալը պարտավոր են առանձնացնել հիվանդացած կենդանիներին, թույլ չտալ մսի համար մորթելը, թույլ չտալ, վոր անտեսությունից դուրս տարվեն թե հիվանդ և թե առողջ կենդանիները և հում անասնամթերքներն ու կերը» (Հոդ. 86)։

«Տեղական իշխանության մարմինների կարգադրությամբ յուրաքանչյուր գյուղում անասունների գերեզմանոցներ են սարքվում ու պահպանվում են անասնաբուժա-սանիտարական պահանջների համաձայն... դիակները թաղելու համար» (հոդ. 94)։

Վերոհիշյալ միջոցները չգործադրող անասնատերերը, նրանց փոխարինողները և կամ պաշտոնական անձինք յենթարկվում են պատասխանավության, համաձայն քրեական Որենսգրքի համապատասխան հոդվածների։

16. ՎԱՐԱԿՎԱԾ ԳՈՄԵՐԻ ՅԵՎ ԱՅԼ ՎԱՅՐԵՐԻ ԱԽՏԱՀԱՆՈՒՄԸ

Ախտահանումը կատարվում է մի վայրում գտնված մանրեները, վիրուսը, այսինքն հիվանդության բուլնը վոչընչացնելու նպատակով։ Ժանտախտի վիրուսն ուրիշ մանրեների, վիրուսների նման հողի մեջ յերկար ժամանակ չի կարող ապրել, չոր տեղերում մի քանի որ միայն, իսկ խոնավ վայրերում ու գոմերում 3-4 ամիս կարող է ապրել, իսկ ախտահանիչ (հականեխիչ) նյութերի միջոցով շատ հեշտ կերպով վոչնչանում է։

Ախտահանման համար նպատակահարմար են հետևյալ յեղանակները.—

1. Գոմի մեջ գտնվող քակորը (թրիքը), խոտը, հարդը, (դարման) պետք է հավաքել և այրել կամ թափել անասունների համար պատրաստված գերեզմանոցների մեջ բացված խոր փոսերի մեջ։

2. Մսուրը և հատակը յեթե քարով, ցեմենտով կամ աղյուսով են շինված, պետք է մաքրել 25 տոկոս լվացքի սոդայի (նատրիում կարբոնատ) յեռացած ջրով և կամ մոխրաջրով, իսկ հետո պետք է յերեք տոկոս կարբոլկայի կամ կրեոլինի ջրով լավ լվանալ։

Մոխրաջուրը պատրաստելու համար հարկավոր է մի դույլ ջրի մեջ յերեք ֆունտ փայտի մոխիր ածել, կես ժամի չափ յեռացնել և հետո ջուրը քամել։

3. Գոմերի պատերը պետք է նորից սվաղել կրով. դրա համար կարելի յե 3—4 ֆունտ կիրը մի դույլ տաք ջրի մեջ խառնել և քսել գոմերի պատերին։

4. Փայտից, յերկաթից շինված իրերը կարելի յե ախտահանել 3 տոկոս կարբոլկայի կամ կրեոլինի ջրով, իսկ յեթե հնարավոր չլինի դեղորայքը ձեռք բերել, պետք է այդ իրերը թրջել թաց շորով և պահել արևի տակ մի ցերեկ։

Այնուամենայնիվ ախտահանումը պետք է կատարել միշտ անասնաբույժի խորհրդով և նրա ցույց տված հատուկ յեղանակով, իսկ յերբ այդ հնարավոր չե, այն ժամանակ միայն դիմել վերոհիշյալ միջոցներին։

ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆ ՅԵՎ ՀԵՏՋՀԵՏԵ ԿՀԱՆՋՆՎԵՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ

1. Գենադերչակ
2. Հողի ոպտագործման ընկերական ձևերը
3. Մեղուների խնամքը
4. Խոզաբուծություն
5. Հողի պարարտացումը
6. Ինչպես են ցանում բամբակը շարքացանով։

ԴԻՄԵԼ՝ Ցերեվան, Հողժողկոմատ, Հրատարակչության, Գետհրատի կենտրոնական յեվ գավառական գրախանութներին, Գավհողբաժիններին։

ՀՀ Ազգային գրադարան
NL0266894

8977

ԳԻՆՆ Է 15 ԿՈՊ.

Գրպ-